ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆ

«08» օգոստոսի 2017 թվականի № 97-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՐԻ ԴԵՊՔՈՒՄ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ ԵՆԹԱԿԱ ՀԱՆՔԱՅԻՆ ՀՈՒՄՔԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՄԵԿԱՆԳԱՄՅԱ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի N 1524-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարի 2015 թվականի մայիսի 6-ի թիվ 139-Ն հրամանով հաստատված հավելված 1-ի 1-ին, 9-րդ և 10-րդ կետերի պահանջները, հաշվի առնելով հրամանի հավելված 2-ով սահմանված սահմանափակումների ենթակա հանքային հումքի տեսակների ցանկի 1-ին կետի 4-րդ ենթակետը, «ԱՆՄՈՌ» ՓԲ ընկերության կողմից 2017թ. օգոստոսի 4-ին ներկայացված թիվ 02-17 և թիվ 03-17 դիմումները, Ընդերքի գործակալության պետի զեկուցագիրը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Դադարեցնել «ԱՆՄՈՌ» ՓԲ ընկերությանը 2017թ. օգոստոսի 2-ին տրամադրված թիվ 2.11AM17000ԿՔ0001 հանքային հումքի արտահանման մեկանգամյա լիցենզիայի գործողությունը:
2. «ԱՆՄՈՌ» ՓԲ ընկերությանը տրամադրել հանքային հումքի տեսակի՝ Հայաստանի Հանրապետության տարածքից երրորդ երկրներ արտահանման մեկանգամյա լիցենզիա ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 7103.10.000.9 ծածկագրին դասվող 20 կիլոգրամ երկնագույն փիրուզ ԱՄՆ արտահանելու նպատակով:
3. Սահմանել հանքային հումքի տեսակի՝ Հայաստանի Հանրապետության տարածքից երրորդ երկրներ արտահանման մեկանգամյա լիցենզիայի գործողության ժամկետը՝ տրման պահից մինչև 2017թ. դեկտեմբերի 31-ը:
4. Ընդերքի գործակալության պետին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել մեկանգամյա լիցենզիայի հանձնումը «ԱՆՄՈՌ» ՓԲ ընկերությանը:
5. Սույն հրամանը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:
6. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ